ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը փետրվարի 2021թ. N 46
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Ծովիկ Պողոսի Ռամազյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.08 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Պարգևաշեն 1-ին թաղամաս, 2-րդ փողոց, թիվ 70 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 47

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6- Ի N 88 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2- Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների **որոշում եմ.**

1.Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2018 թվականի ապրիլի 6 - ի<< Համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի կանոնակարգը հաստատելու մասին>> N 88 որոշման հավելված 2- ի մեջ կատարել փոփոխություն:

2. Սույն փոփոխությունը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից

Համայնքի ղեկավար **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021թ. Փետրվարի 24
ք.Նոր Հաճն

Հավելված 2
Նոր Հաճնի քաղաքային
համայնքի ղեկավարի 2018թ
մարտի 6-ի թիվ 88 որոշման

Աուդիտի ենթակա միավորների ցանկ

N	Աուդիտի ենթակա միավորները
1	Ֆինանսական և տնտեսական վերլուծությունների և գնումների գործընթացներ
2	Իրավաբանական գործընթացներ
3	Քաղաքաշինության և հողօգտագործման գործընթացներ
4	Տեղական տուրքերի, գույքահարկի և հողի վարձավճարների հավաքագրման գործընթացներ
5	Քարտուղարություն
6	Մշակույթի և կրթության հարցերի հետ կապված գործընթացներ
7	Սոցիալական հարցերի հետ կապված գործընթացներ
8	« Նոր Հաճնի համայնքապետարանի մանկապարտեզ» ՀՈԱԿ
9	Նոր Հաճնի համայնքապետարանի« Հաճն ջուր» ՀՈԱԿ
10	« Նոր Հաճնի համայնքապետարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ
11	«Նոր Հաճնի համայնքապետարանի կոմունալ տնտեսություն» հիմնարկ
12	«Նոր Հաճնի համայնքապետարանի մարզադպրոց» ՀՈԱԿ
13	«Նոր Հաճնի համայնքապետարանի մշակույթի տուն» ՀՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25-ը փետրվարի 2021 թ. N 48

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՋԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, 2019 թվականի թիվ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի հունվարի 19-ի N 139-Ն որոշումների, հաշվի առնելով Գևորգ Շմավոնի Ավետիսյանի դիմումը (22.01.2021թ. մտից թիվ 35) ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի փետրվարի 24-ի N 24022021-07-0136 վկայական) Աջափնյա փողոցի թիվ 3/11 հասցեում գտնվող 46.4 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին՝ 42.26 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0.00464 հա մակերեսով, 07-006-0009-0035 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, բնակելի կառուցապատման նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Գևորգ Շմավոնի Ավետիսյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարևանդիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

3.1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 2100 (երկու հազար հարյուր) դրամ

3.2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) դրամ:

4. Գևորգ Շմավոնի Ավետիսյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին՝ 97440 (իննսունյոթ հազար չորս հարյուր քառասունչորս) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900115102122 հաշվեհամարին՝ 136416 (մեկ հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր տասնվեց) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գևորգ Շմավոնի Ավետիսյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Շմավոնի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 49

ՆՈՐ ՀԱՃՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն քաղաքային համայնքի 2021թվականի բյուջեում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի /Հավելվածը կցվում է/:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ,գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. փետրվարի 25
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի
ղեկավարի 2021 թվականի փետրվարի 25-ի
N 49 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

(հազար դրամ)

Հ/Հ	Եկամուտներ, ծախսեր				Հաստատված գումարը	ավելացում /+/ պակասեցում /-/	Փոփոխված գումարը
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	Ծածկագիրը	Անվանումը	Հոդվածը			
	ԾԱԽՍԵՐ						
1	Սոցիալական հատուկ արտոնություններ	10.07.01	Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	1000.0	-500.0	500.0
2	Սոցիալական հատուկ արտոնություններ	10.07.01	Այլ նպաստներ բյուջեից	4729	2500.0	500.0	3000.0

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան